ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 18

ՌՈՒՍՏԱՄ ԱՍԱԴՈՎԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԹԻՎ 1748299 ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով թիվ 1748299 սեփականության վկայականը, Ռուստամ Ասադովի դիմումը, 07.12.2001 թ-ի թիվ 748 Առքուվաճառքի պայմանագիրը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թիվ 1748299 սեփականության իրավունքի վկայականում կատարել փոփոխություն՝ հողամասի, որտեղ եղել է կիսակառույց, ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի առքուվաճառքի 07.12.2001 թ-ի թիվ 748 պայմանագրի հիման վրա, քանի որ 07.12.2001 թ-ի թիվ 748 Առքուվաճառքի պայմանագրով Ռուստամ Ասադովը ստացել է թիվ 1748299 գույքի սեփականության վկայականը, սակայն սխալմամբ առքուվաճառքը գրանցվել է թիվ 601852 վկայականով՝ ծածկագիր 06-043-0016-0005, մինչդեռ պետք է գրանցվեր 06-043-0015-0026 ծածկագրի տակ:

2.Կատարել հողամասի և հողամասում կառուցված ապօրինի շինության չափագրում:

3.Ըստ անհրաժեշտության վերը նշված ուղղումներն իրականացնել կադաստրային գործում առկա փաստաթղթերում:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 19

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0105-0015 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՝՝Տեղական ինքնակառավարման մասին՝՝ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մկրտիչ Աքուլյանին սեփականության իրավունքով պատկանող 06-043-0105-0015 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին՝ 0,0575հա հողամասին, տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնք, ՝՝Թեժ լեռ՝՝ թաղամաս 1փ. 10 փկղ. թիվ 15:

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով ,որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 20

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Համայնքային ծառայության մասին" ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետով, Լերմոնտովո համայնքի ավագանու 04/02/2022 թ-ի թիվ 02 որոշումով և Լոռու մարզպետի 11/02/2022 թ-ի թիվ 01/107,4,1/01057-2022 գրությունով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել Լերմոնտովո համայնքի համայնքային ծառայության Մրցութային և Ատեստավորման հանձնաժողովների կազմը.

1.Էդիկ Չախալյան - նախագահ /համայնքի ղեկավար/

2.Լիլիթ Քոչարյան - մարզպետարանի ներկայացուցիչ

3.Սամվել Խառատյան - մարզպետարանի ներկայացուցիչ

4.Մուշեղ Գրիգորյան - մարզպետարանի ներկայացուցիչ

5.Վիտալի Ասադով - ավագանու անդամ

6.Վասիլի Կորոլյով - ավագանու անդամ

7.Իվան Բոլոտին - ավագանու անդամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**